ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 0735-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԽԱՆՋՅԱՆ, 15-ՐԴ ՓՈՂՈՑ ,7-ՐԴ ՇԵՆՔ,1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՋԱՄԱԼ ԱԳԻԹԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ,ԼԱԼԻԽԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՍԼՈՅԱՆԻ,ԿԱՐԻՆԵ ՋԱՄԱԼԻ ԽԴՐՅԱՆԻՆ,ՔՅԱԼԱՇ ՋԱՄԱԼԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ,ԱԼԻ ՋԱՄԱԼԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ, ԱՄԱՐ ՋԱՄԱԼԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ, ԱԶԻԶ ՋԱՄԱԼԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԻՆԵ ՋԱՄԱԼԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 0359-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Խանջյան,15-րդ փողոց ,7-րդ շենք,1 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով

Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը ,Ջամալ Քյալաշյանի 16.04.2025 թվականի թիվ 1996 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Ջամալ Ագիթի Քյալաշյանին (ծնվ. 11/09/1951թ.), Լալիխան Սուրենի Սլոյանին (ծնվ. 02.10.1954թ.), Կարինե Ջամալի Խդրյանին (ծնվ. 27.07.1972թ.),Քյալաշ Ջամալի Քյալաշյանին (ծնվ. 02.04.1975թ.), Ալի Ջամալի Քյալաշյանին (ծնվ. 16.08.1978թ.),Ազիզ Ջամալի Քյալաշյանին (ծնվ. 15.12.1981թ.) և Նարինե Ջամալի Քյալաշյանին (ծնվ. 22.04.1986թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Խանջյան , 15-րդ փողոց ,7-րդ շենք,1 հասցեում գտնվող 0.02142 հա օրինական հողամասի վրա 1990 թ. կառուցված 158,5 քմ մակերեսով բնակարանի նկատմամբ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ջամալ Ագիթի Քյալաշյանին , Լալիխան Սուրենի Սլոյանին, Կարինե Ջամալի Քյալաշյանին ,Քյալաշ Ջամալի Քյալաշյանին , Ալի Ջամալի Քյալաշյանին,Ազիզ Ջամալի Քյալաշյանին և Նարինե Ջամալի Քյալաշյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Խանջյան,15-րդ փողոց ,7 շենք ,1 բնակարան:

4. Ուժը կորցրած ճանաչել 2025 թվականի մարտի 13-ի թիվ 0359-Ա որոշումը:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Կ. ՄԿՐՏՉՅԱՆ**

2025թ. հունիսի 16
ք. Արմավիր